ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«03» դեկտեմբերի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ է աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Կ.Բաղալյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի նորընտիր ավագանու թվով 31 (երեսունմեկ) անդամներ՝

Վ.Սամսոնյանը, Հ.Սուլթանյանը, Լ.Սանոյանը, Մ.Սահակյանը,Ա.Հովհաննիսյանը, Տ.Հովհաննիսյանը, Թ.Համբարձումյանը, Ն.Պողոսյանը, Խ.Վարաժյանը, Գ.Պասկևիչյանը, Ս.Հովհաննիսյան, Ռ.Անդրիասյանը, Ս.Առաքելյանը, Ա.Բաղդասարյանը, Ա.Բեյբուտյանը, Ա.Պապիկյանը, Հ.Նիկողասյանը, Ն.Ղազարյանը, Գ.Թաթարյանը, Զ.Միքայելյանը, Ե.Խանամիրյանը, Շ.Արամյանը, Լ.Մուրադյանը, Վ.Հակոբյան, Ս.Ադամյան, Կ.Սոսյան, Ն.Միրզոյանը, Հ.Մարգարյանը, Կ.Մալխասյան, Կ.Ասատրյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝
ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է) և մի խումբ քաղաքացիներ:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 30
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական երկրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 223-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Զոյա Միքայելյանը առաջադրեց Գյումրի համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական գործող հանձնաժողովի նախագահի՝ Լիլիթ Մուրադյանի թեկնածությունը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 27

դեմ – 0

ձեռնպահ – 3

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 223-Ն որոշման 1–ին կետով հաստատված հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2,3,4 հավելվածների:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 31

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Կազմակերպության վարձակալական վարձավճարի պարտքի մարման համար որպես նվիրատվություն հատկացնել 280 000 (երկու հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/1/1 գործառական, (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Ավագանու անդամ Վարդևան Հակոբյանի կողմից առաջարկություն եղավ Աֆղանստանի պատերազմի մասնակից վետերաններին ևս ներառել օգնության ցուցակներում, սակայն համայնքի ղեկավարի կողմից եղավ հարցի պարզաբանում, որ Աֆղանստանի պատերազմը ՀՀ կառավարության կողմից հավասարեցված չէ պատերազմական գործողությունների, եթե որշում լինի, հարցը կվերանայվի և օնություն կտրամադրվի նաև վերը նշված անձանց:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 21

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել դրամական օգնություն ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1) Արցախյան պատերազմում (1991-1994թվականներին) զոհված թվով 104 (մեկ հարյուր չորս) ազատամարտիկների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 080 000 (երկու միլիոն ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N1 հավելվածի,

2) զոհված (մահացած) թվով 301 (երեք հարյուր մեկ) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 6 020 000 (վեց միլիոն քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ թվով 17 (տասնյոթ) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 255 000 (երկու հարյուր հիսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ՝ համաձայն N3 հավելվածի,

4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ թվով 232 (երկու հարյուր երեսուներկու) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 10 000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 320 000 (երկու միլիոն երեք հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 4 հավելվածի,

5) Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից թվով 2 (երկու) վետերաններից յուրաքանչյուրին՝ 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 40 000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N5 հավելվածի:

6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից թվով 5 (հինգ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N6 հավելվածի:

7) 2020թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը ներառյալ Արցախի Հանրապետությունում ծավալված մարտական գործողությունների ժամանակ անհայտ կորած համարվող թվով 4 (չորս) զինծառայողների ընտանիքներին՝ յուրաքանչյուրին 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 80 000 (ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ՝ համաձայն N7 հավելվածի:

8) 2020թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը ներառյալ Արցախի Հանրապետությունում ծավալված մարտական գործողությունների ժամանակ գերեվարված թվով 10 (տաս) զինծառայողների ընտանիքներին՝ յուրաքանչյուրին 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ՝ համաձայն N8 հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 203 (ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՔ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Ավագանու անդամ Վարդևան Հակոբյանը ներկայացրեց «Զարթոնք» խմբակցության կողմից կատարված ուսումնասիրությունները նախագծում նշված 203 անձանցից 28-ի վերաբերյալ, որի արդյունքում հայտնաբերվել են սոցիալապես անապահով 10 անձանց կարգավիճակների անհամապատասխանություն:

«Ապրելու երկիր» խմբակցության ղեկավար Կարեն Մալխասյանը նույնպես անհամաձայնություն հայտնեց դրամական օգնություն ստացող անձանց ցուցակների կազմման գործընթացի վերաբերյալ:

Զեկուցողի կողմից տրվեցին հարցի հետ կապված որոշ պարզաբանումներ:

Քննարկումների արդյունքում օնությունների տրամադրման ընթացակարգի վերանայման անհրաժեշտության հարցում ավագանու անդամները եկան ընդհանուր համաձայնության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 6
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 203 (երկու հարյուր երեք) անձանց՝ որպես դրամական օգնություն՝ կանխիկ հատկացնել 2 200 000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՒԶՎԵԼՏ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 31
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Ռուզվելտ Մուշեղյանի ընտանիքին որպես դրամական օգնություն հատկացնել 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռուզվելտ Մուշեղյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. **2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 31
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2021 թվականի ընթացքում աշխարհի և Եվրոպայի առաջնություններում լավագույն մարզական արդյունքներ ցուցաբերած գյումրեցի մարզիկներին և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 12300000 (տասներկու միլիոն երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը

կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 7

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի կողմից իրականացվելիք ամանորյա միջոցառումների կազմակերպման և անցկացման համար հատկացնել 10 400 000 (տասը միլիոն չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ - գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի 5 900 000 (հինգ միլիոն ինը հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) «Այլ ծախսեր» և 4 500 000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի հատկացումը կատարել 6/4/1 գործառական դասակարգման (4269) «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածներից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 7(ՅՈԹ) ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 28

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 7 (յոթ) ընտանիքներին՝ որպես դրամական օգնություն հատկացնել՝ 1 100 000 (մեկ միլիոն հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Քրիստինա Թումոյանին, Մանվել Սեխոյանին, Արմենուհի Գևորգյանին, Գոհար Կաժոյանին, Ամելիդա Հակոբյանին, Կարինե Մարտիրոսյանին, Անուշավան Թումասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԹՎՈՎ 22 (ՔՍԱՆԵՐԿՈՒ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Շ.ԱԵՔՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 27
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 22 (քսաներկու)՝ «Լապտերիկ», «Ծիածան», «Թոռնիկ Մանուշակ», «Ժպիտ», «Լուսաստղիկ», «Արձագանք», «Լիլիթ», «Նանուլիկ», «Լիանա», «Արևիկ», «Գոհար», «Փարոս», «Անի պարտեզ», «Կարմիր գլխարկ», «Հենզել և Գրետել», «Սուրբ Մարիամ», «Գյումրու մանկիկ», «Էյլիթիա», «Ձյունիկ», «Հուսո առագաստ», «Երազանք», «Անուլիկ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-22 հավելվածների:
2. Հանձնարարել սույն որոշման 1–ին կետում նշված կազմակերպությունների տնօրեններին.

1) ողջամիտ ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սույն որոշման 1–ին կետով նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունները օրենքով սահմանված կարգով պետական գրանցում կատարելու խնդրանքով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 28
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները ու պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Կասեցնել Գյումրի համայնքի վարչական տարածքում իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից մատուցվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարությունների ծառայությունների իրականացումը այն շենքերում և

շինություններում, որոնք չեն համապատասխանում հավելվածում ներկայացված պահանջներին ու պայմաններին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 01-ից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 110-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 29

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության և Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու, անհատական կազմը հաստատելու և աճուրդավար ու արձանագրող նշանակելու մասին» N 110-Ա որոշման մեջ մրցութային հանձնաժողովի անհատական կազմը շարադրել նոր խմբագրությամբ.
   1) Արթուր Պապիկյան - Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
   2) Հենրիկ Գասպարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,
   3) Հովհաննես Սահակյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ՝ բաժնի պետի պարտականությունները կատարող,
   4) Մենուա Մկրտչյան – աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,
   5) Հրաչիկ Վարդանյան – աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,
   6) Սիրվարդ Բասենցյան - աշխատակազմ քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի գլխավոր մասնագետ,
   7) Գևորգ Պասկևիչյան- Գյումրի համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) անդամ
   8) Աստղիկ Բեյբուտյան- ավագանու անդամ,
   9) Կարեն Սոսյան- ավագանու անդամ,
   10) Կարեն Մալխասյան- ավագանու անդամ,
   11) Հասմիկ Մարգարյան- ավագանու անդամ:
2. Նշանակել՝
   1) աճուրդավար՝ Արթուր Պապիկյան
   2) արձանագրող՝ Սիրվարդ Բասենցյան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մրցութային հանձնաժողովի անդամներին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԳՈՐԾՈՂ «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ,, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ» ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 27
դեմ – 0
ձեռնպահ – 2
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ձևավորել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող «Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի» խորհրդակցական մարմին (այսուհետ՝ Խորհրդակցական մարմին):
2. Հաստատել Խորհրդակցական մարմնի կազմը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ N 42/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 29
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրազի փողոց N 42/3 հասցեում ինքնակամ կառուցված 11.39 (տասնմեկ ամբողջ երեսունինը հարյուրերորդական) մակերեսով աստիճանը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 11.39 (տասնմեկ ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 5 (հինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած «Գյումրու թիվ 2 ստոմատոլոգիական պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված աստիճանի և հողամասի վարձակալության վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 35000 (երեսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 06-Ի N 119-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ԹՈՎՄԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 28
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը սահմանելու մասին» N 119-Ն որոշմամբ հաստատված կարգը լրացնել հետևյալ նոր՝ «9.1» կետով.

   «9.1 Արվեստի և մշակույթի ոլորտում հանրապետական և միջազգային մրցույթ-փառատոներում (պետական մարմինների կողմից կազմակերպված) մրցանակային տեղերի արժանացած աշակերտներին և նրանց ուսուցիչներին պարգևատրման

առավելագույն չափերը (Հայաստանի Հանրապետության դրամով կամ դրան համարժեք բնաիրային տեսքով)՝ համաձայն աղյուսակի.

Աղյուսակ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ

Աշակերտներ		Ուսուցիչներ
I	100 000 (մեկ հարյուր հազար)	70 000 (յոթանասուն հազար)
II	70 000 (յոթանասուն հազար)	50 000 (հիսուն հազար)
III	50 000 (հիսուն հազար)	30 000 (երեսուն հազար)

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ

Աշակերտներ		Ուսուցիչներ
I	50 000 (հիսուն հազար)	40 000 (քառասուն հազար)
II	40 000 (քառասուն հազար)	30 000 (երեսուն հազար)
III	30 000 (երեսուն հազար)	20 000 (քսան հազար)

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 95-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ԹՈՎՄԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 28

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային ենթակայության արտադպրոցական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցվող վճարների նկատմամբ արտոնությունների սահմանման և կիրառման մասին» N 95-Ա որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ նոր «է» պարբերությամբ.

«է. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների, անհայտ բացակայող ճանաչված, հաշմանդամություն ձեռք բերած անձանց երեխաներին»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 28
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի (այսուհետ՝ համայնք) «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկի՝ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արման Շաբոյանի թեկնածությանը (ծնված՝ 1992 թվականի փետրվարի 13-ին, անձնագիր՝ AR 0675681, տրված՝ 2018 թվականի մայիսի 02-ին, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության 016-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Արագած 1 թղմ. շ. 2, բն. 12, ՀԾՀ՝ 2302920279):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Շաբոյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ N 190-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Է.ԲԱՂՐԱՄՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 28
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):
2. Հաստատել Հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 190-Ա որոշումը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 30
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական նստաշրջանի առաջին նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի փետրվարի 08-ը՝ ժամը՝ 12:00:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Վ.Սամսոնյան _____

Հ.Սուլթանյան _____

Լ. Սանոյան _____

Մ. Սահակյան _____

Վ. Հունանյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Ա. Հովհաննիսյան _____

Թ.Համբարձումյան _____

Ն. Պողոսյան _____

Գ.Պասկևիչյան _____

Խ. Վարաժյան _____

Ս. Հովհաննիսյան _____

Ռ.Անդրիասյան _____

Ս.Առաքելյան _____

Ա. Բաղդասարյան _____

Ա. Բեյբուտյան _____

Ա.Պապիկյան _____

Հ. Նիկողասյան _____

Ն. Ղազարյան _____

Գ. Թաթարյան _____

Զ. Միքայելյան _____

Ե. Խանամիրյան _____

Շ.Արամյան _____

Լ. Մուրադյան _____

Վ.Հակոբյան _____

Կ.Սոսյան _____

Ս. Ադամյան _____

Ն. Միրզոյան _____

Հ.Մարգարյան _____

Կ.Մալխասյան _____

Կ.Ասատրյան _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի
«03» դեկտեմբերի 2021 թվական